ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1737 - Ա **30 մարտի 2009թ.**

ԹԱՎՐԻԶՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 2 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՍՏՂԻԿ ԱԲԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՎԱՐՈՒԺԱՆ ՀՐԱՆՏԻ ԽԱՆԱՐՅԱՆԻ, ԱՐՇԱՎԻՐ ՀՐԱՆՏԻ ԽԱՆԱՐՅԱՆԻ, ՄԱՐԻՆԱ ՀՐԱՆՏԻ ԽԱՆԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Աստղիկ Աբելի Գրիգորյանի (ծնված 08.03.1924թ.), Վարուժան Հրանտի Խանարյանի (ծնված 23.08.1949թ.), Արշավիր Հրանտի Խանարյանի (ծնված 07.08.1954թ.), Մարինա Հրանտի Խանարյանի (ծնված 05.02.1948թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Թավրիզյան փողոցի հ. 2 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 379.49քմ, որից 360քմ մակերեսով հողամասն Աստղիկ Աբելի Գրիգորյանին, Վարուժան Հրանտի Խանարյանին, Արշավիր Հրանտի Խանարյանին, Մարինա Հրանտի Խանարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 19.49քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1958 թվականը, 07.11.2008թ. սեփականության իրավունքի վկայագիրը, 07.11.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման 25.11..2008թ. հ.2062, Երևանի քաղաքապետարանի «Հողի ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20/2-Ե/145 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 13.03.2009թ. հ.20-Ել-1745 եզրակացությունը, համաձայն որի Թավրիզյան փողոցի հ.2 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ. 2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Թավրիզյան փողոցի հ.2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Աստղիկ Աբելի Գրիգորյանի, Վարուժան Հրանտի Խանարյանի, Արշավիր Հրանտի Խանարյանի, Մարինա Հրանտի Խանարյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան

զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ օրինական 360քմ մակերեսով հողամասին կից 19.49քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 19.49քմ մակերեսով հողամասի նկատմամբ։

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

3. Թավրիզյան հ.2 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Թավրիզյան փողոցի հ.2 տուն»։

4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Աստղիկ Աբելի Գրիգորյանի, Վարուժան Հրանտի Խանարյանի, Արշավիր Հրանտի Խանարյանի, Մարինա Հրանտի Խանարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Արաբկիր թաղապետարան։

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ